ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

ԱՎԱՏՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Կատարող Գայանե Հրաչիկի Պողոսյան

անուն, ազգանուն, հայրանուն

Թիվ 23 միջնակարգ դպրոց, պատմություն

դպրոց, մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի

Ղեկավար՝ Լ. Գրքիկյան

անուն, ազգանուն

Գյումրի - 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԱՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ……4

ԳԼՈՒԽ 2. ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ …… 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……16

ՕԳՏԱԳՈԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……..17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրահայտ է, որ կրթության, զարգացման, գեղագիտական ու բարոյագիտական դաստիարակության, ճաշակի ու աշխարհընկալման և ընդհանրապես արժեհամակարգի ձևավորման և զարգացման հիմքերը դրվում են դպրոցում: Այս համատեքստում կարևորվում է արժեհամակարգի ձևավորումը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական և հոգևոր, իմացական, մշակութային ու էթնիկական հատկանիշների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ կարող ենք ասել, որ չկա իրական կրթություն առանց լիարժեք համակարգի: Արժեհամակարգը կողմնորոշիչ դեր ունի մարդու առարկայական և սոցիալական իրականության մեջ, որն արտահայտվում է նրա անմիջական վերաբերմունքով շրջապատող առարկաների ու երևույթների նկատմամբ:

Յուրաքանչյուր շրջան առանձնանում է արժեքների իր համակազմով, որին դպրոցում աշակերտները կարող են ծանոթանալ հենց պատմության դասերին՝ քննարկելով և վերլուծելով դրանց կարևորությունը և քննելով թողած ազդեցությունը համամարդկային և ազգային պատմության վրա:

«Արժեհամակարգ» հասկացությունը, լինելով տարողունակ և բազմաշերտ, իր մեջ ներառում է տարաբնույթ նուրբ հարցեր: Այս տրամաբանությամբ մեր հետազոտական աշխատանքի նյութը բաժանել ենք 2 մասի՝ նախ համամարդկային, ապա՝ ազգային արժեքային համակարգի ձևավորումը *Համաշխարհային պատմություն* և *Հայոց պատմություն* առարկաների դասավանդման ընթացքում:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԱԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Ընդունված է համարել, որ արժեքների մեծ մասը սնվում է էթիկայի նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Անշուշտ, էթիկական նորմերն անհրաժեշտ են մարդկանց համակեցությունն ապահովելու համար, որոնք երբեմն պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուրի շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում: Այս առումով մանավանդ կարևորվում է դպրոցի դերը, որը պետք է կարողանա սովորողների մեջ դաստիարակել այնպիսի հատկանիշներ, որոնք բացարձակ են մարդկային համաբերությունների բոլոր ոլորտներում:

Նկատենք, որ *Հանրակրթական պետական չափորոշիչներում* ի շարս այլ վերջնարդյունքների ինչպես տարրական, այնպես էլ հիմնական և ավագ դպրոցների համար նշվում է, որ սովորողը պետք է *ճանաչի իր ընտանեկան, ազգային և քաղաքացիական պատկանելությունը. ցուցաբերի այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք… դրսևորի հարգալից և հոգատար վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ, ցուցաբերի մշակույթի իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում…. ներկայացնի հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում և համաշխարհային մշակույթի դերը համամարդկային արժեքների համատեքստում…. կարևորի իր՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում*[1]:

Այս և նմանատիպ հատկանիշների ձևավորման համար մեծ հնարավորություն են տալիս պատմության դասաժամերը, որոնց ընթացքում աշակերտների մեջ ձևավորվելու է հայրենասիրություն, ազգային դաստիարակություն, ունենալու են պատմության համամարդկային հարցերի վերաբերյալ պատկերացումներ,

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

կարողանալու են հիմնախնդիրների վերաբերյալ վերլուծություններ անել՝ անշուշտ, իրենց տարիքի և իմացության շրջանակներում:

Այս պարագայում արդեն ուսուցիչը պետք է կարողանա դասավանդման ճիշտ մեթոդ ընտրել և այն նպատակային և տեղին կիրառել: Հանրահայտ է, որ մեթոդիկայի հիմնական խնդիրը սովորեցնելն է, այն կոնկրետացնում է ուսուցչի աշխատանքը ըստ դասարանների և դասերի: Պատմական նյութի բովանդակությունից ելնելով՝ հաշվի առնելով սովորողների ճանաչողական կարողությունները, ուսուցիչը ընտրում է դասավանդման ձևեր ու մեթոդներ, հնարներ դասի արդյունավետությունը բարձրացնելու, գիտելիքների հաղորդման ու աշակերտների կողմից նյութի դյուրընկալման համար:

Այս պարագայում կարևորվում է ուսուցչի՝ մեթոդի ընտրությունը. այսինքն՝ որ թեման ինչպես պետք է դասավանդվի, որ առավելագույն արդյունք ապահովվի: Օրինակ՝ կան թեմաներ, որոնց դասավանդման ժամանակ կարող են ծագել հետաքրքրական հարցեր, նուրբ դիտարկումների և արդիական զուգահեռների անհրաժեշտություն լինի, ուսուցիչը դասին նախապատրաստվելիս սրանք ևս պետք է հաշվի առնի: Այսպես, վերցնենք, օրինակ XI դասարանի *Համաշխարհային պատմություն* առարկայի «*Ռուսաստանը և քաղաքակրթական պառակտումը 1917թ.*» թեման: Պատմական փաստացի եղելություններին զուգահեռ այս թեմայի շուրջ կարելի է ծավալվել՝ վերլուծելով և ժամանակակից իրականության հետ զուգահեռներ անցկացնելով, ընդգծելով այն հանգամանքը, թե ինչի կարող է հանգեցնել արժեհամակարգի փոփոխությունը:

Համաշխարհային պատմության դասերին անդրադառնալիս պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ այս կամ այն ժամանակաշրջանի կամ ժողովրդի աշխարհընկալումը կարող է այսօրվա համեմատ տարբեր լինել: Սա առավել ընդգծվում է մանավանդ հին աշխարհի պատմությանն անդրադառնալիս, երբ հեթանոսական արժեհամակարգը շատ դեպքերում այլ էր, քրիստոնեականը՝ այլ: Օրինակ՝ 6-րդ դասարանում «Հին Սպարտան և Աթենքը» թեման, կարծում ենք, նպատակահարմար կլինի եթե ուսուցիչը կիրառի նախ Վեննի դիագրամը՝ համեմատելով և զուգադրելով երկու քաղաքների արժեհամակարգերը ձևավորող քաղաքական, տնտեսական, մշակութային ընդհանրությունները և

առանձնահատկությունները: Կարծում ենք, տեղին կլինի եթե հին հույնական իրողությունները համեմատենք նաև տվյալ ժամանակաշրջանի հայկական իրողությունների հետ՝ ընդգծելով ընդհանրությունները և տարբերությունները: Չափազանց կարևոր է, որ նման աշխատանքի ժամանակ աշակերտները իրենք կարողանան համեմատել և ինքնուրույն եզրահանգումներ անել՝ զարգացնելով քննադատական մտածողությունը: Կարծում ենք, արդի իրականության գերկարևոր է, որ աշակերտը, ապա և քաղաքացին կարողնա սեփական կարծիք ունենալ, ինքնուրույն եզրակացությունների հանգել՝ միաժամանակ լսելով և գնահատելով մյուսների կարծիքները:

Նշենք, որ պատմագիտական նյութերի դասավանդումը, ունենալով յուրահատկություններ, առանձնանում է իր հիմնական նպատակներով. այն է՝ աշակերտի համար անծանոթ նյութի մասին աշխարհաճանաչողական տեղեկությունների հաղորդում, դրանով պայմանավորված նաև՝ գիտելիքների ու բառապաշարի հարստացում, աշխարհայացի ընդլայնում, նոր արժեքների ներկայացում: Սա նկատի ունենալով՝ ավելի է կարևորվում դրանց դերն ու նշանակությունը մանավանդ ժամանակակից հարափոփոխ իրականության մեջ: Իբրև յուրահատկություն կարելի է դիտարկել նաև պատմագիտական նյութերի հաղորդման, ուսուցման կազմակերպումը: Որպեսզի երեխաները լիրաժեքորեն ընկալեն տրված նյութը, ուսուցչից պահանջվում է ավելի մեծ ուշադրություն և զգոնություն, համապատասխան մեթոդների ճիշտ և տեղին կիրառություն: Այս պարագայում անհրաժեշտ է ներազդել աշակերտի դատողության և մտածողության վրա գիտելիքի խորը և բազմակողմանի յուրացման համար: Նմանատիպ նյութերի՝ հնարավորինս արդյունավետ յուրացման համար, օրինակ, Աշոտ Տեր - Գրիգորյանն առաջարկում է ուշադրություն դարձնել հետևյալ իրողությունների վրա. «պայմանավորված գործնական բնույթի հոդվածների ուսումնասիրության յուրահատկությամբ՝ անհրաժեշտ է հաղորդել նյութը մասերից դեպի ընդհանուրը տարվող պլանով, քանի որ գիտելիքների ու աշխարհաճանաչողական տեղեկությունների յուրացումը մաս առ մաս ավելի հեշտ է, քան ամբողջովին»[1]: Ի դեպ, այս հանգամանը, կարծում ենք, պետք է նկատի ունենալ մանավանդ

[1] Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 221:

պատմական թեմայով նյութերին անդրադառնալիս, որոնք, իրենց ծավալով և բովանդակությամբ պայմանավորված, կարող են խրթին լինել, և նյութը մաս առ մաս ներկայացնելու անհրաժեշտություն զգացվի: Մեր վերցրած օրինակում նախ անհրաժեշտ է 6-րդ դասարանի աշակերտներին ներկայացնել Սպարտան, ապա՝ Աթենքը:

Ինչ վերաբերում է կոնկրետ պատմական դեմքերին ու դեպքերին, ապա այս պարագայում անհրաժեշտ է նյութն այնպես ներկայացնել, որ աշակերտները ճշգրիտ պատկերացում ունենան տվյալ պատմական իրողությունների մասին: Այդ նպատակով ցանկալի է դասի ընթացքում կիրառել զննական պարագաներ՝ նկարներ, քարտեզներ, անհրաժեշտաբար՝ ուսումնական ֆիլմերի, տեսանյութերի դիտում կազմակերպել: Կարծում ենք՝ տեսանյութերն ու ֆիլմերն այս դեպքում անհրաժեշտ են, քանի որ դրանց միջոցով առավել պատկերավոր կերպով է երեխայի հիշողության մեջ արմատավորվում տվյալ ժամանակաշրջանն իր յուրահատկություններով՝ տարազով, կոլորիտով, սովորույթներով, իսկ պատմական դեմքը՝ իր բնավորության յուրահատուկ գծերով ու գործունեությամբ:

Ներկայացնենք դասի օրինակի տեսքով.

Օրվա դասի պլան

Ամիս, ամսաթիվ՝ _____

Առարկա _____Համաշխարհային պատմություն, Հին աշխարհ_____

Դասարան ___6-րդ_____

Ուսուցիչ _____Գայանե Պողոսյան_____

Դասի թեման՝ _____Հին Սպարտան և Աթենքը_____

Դասի տեսակը՝ Համակցված

Դասի նպատակները.

ա/ ակադեմիական

- _Ներկայացնել Հին Հունաստանի պատմության շրջափուլերը, բնութագրել դրանք, թվարկել դրանց բնորոշ երևույթներ ու իրադարձություններ,

- Թվարկել հունական պոլիսներ ու գաղութներ, պատմական կարևոր դեպքեր, փաստեր:
- Ներկայացնել Աթենքի և Սպարտայի քաղաքական, տնտեսական, մշակութային ընդհանրությունները և առանձնահատկությունները:
- Բացատրել և մեկնաբանել Հին Հունաստանից մեզ հասած հասկացություններ /տիրանիա, օլիգարխիա, ստրատեգիա, ֆալանգա, դեմոկրատիա, սպարտական դաստիարակություն, ակադեմիա, ծերակույտ /:

բ/ սոցիալական

- Զարգացնել խմբում աշխատելու կարողությունը
- Տալ հայեցի դաստիարակություն

Անհրաժեշտ պարագաներ Դասագիրք, տետր, քարտեզ, համակարգիչ, պրոեկտոր

Դասի ընթացքը:

1. Կազմակերպչական պահ:

2. Տնային առաջադրանքներից ծագած հարցերի քննարկում, մեկնաբանում:

Խթանման փուլի նկարագրությունը

3. Աշակերտների հարցում:

4. Համապատասխան հարցադուրմներով բևեռել աշակերտների ուշադրությունը ներկայացվող դասի նյութին: Նախ քատեզի վրա ցույց տալ Հունաստանը՝ նշելով պոլիսները: Անհրաժեշտ է դասին նախորդող նախապատրաստական զրույց, որի ընթացքում ուսուցիչը պետք է ներկայացնի տվյալ պատմական ժամանակաշրջանի յուրահատկությունները, թեմային առնչվող սովորույթներն ու պատմական դեպքերը: Այս պարագայում ցանկալի է, որ երեխաները բավարար պատկերացում ունենան տվյալ ժամանակահատվածի մասին, հետո նոր անդրադառնան նյութին: Զրույցից հետո տեսանյութի դիտում . նախ Սպարտային վերաբերող, ապա՝ Աթենքին: Ի դեպ, պետք է ընտրել այնպիսի տեսանյութ, որը 6-րդ դասարանի աշակերտի համար մատչելի լինի և՛ լեզվական, և՛ տեսական առումներով:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը

1. Աշակերտների միջոցով նոր նյութի վերհանում և քննարկում:

2. Առաջադրանքների կատարում:

Օրինակ՝ քառաբաժանի կենտրոնում գրվում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկվում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը և այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարված պատկեր, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրել օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

Փաղանգ՝ հին հունական, մարտակարգ, ծանրազեն հետևակի գծային հոծ զորաշարք:	
Ունեցել է 8-16 շարք, ճակատի երկարությունը՝ մինչև 500 մ (շարքում 1000 մարդու դեպքում):	Երաժշտություն, պարարվեստ

Այս մոտեցմամբ կարելի է հետաքրքիր վարժություններ կազմակերպել բոլոր այն թեմաների շուրջ, որոնք տեսազննական պարագաներ ունեն:

3. Առաջադրված հարցերի քննարկում:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը

Նյութը բավական ծավալուն է՝ երկու մասից բաղկացած, և դժվարընկալելի: Դասի ամփոփման փուլում առաջարկում ենք կիրառել Վեննի դիագրամը:



1. Հարցերի և առաջադրանքների միջոցով նյութի ամփոփում և հիմնավորում:
2. Աշակերտների գնահատում:

Տնային հանձնարարություն

Սովորել «Հին Սպարտան և Աթենքը» դասը, էջ 72-76

ԳԼՈՒԽ 2. ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է:

Ինչ վերաբերում է Հայոց պատմություն առարկային, ապա այն կարող ենք համարել հայեցի մտածողություն կերտելու, ազգային արժեհամակարգ ձևավորելու, զարգացնելու և դաստիարակելու կարևորագույն առարկաներից է: Հենց այս առարկայի ժամանակ է, որ աշակերտը պետք է իմանա իր նախնիների պատմությունը. ով է ինքը, ումից է սերում, ինչ ճանապարհ են անցել հայերը:

Նկատենք, որ Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության մեջ ևս արտահայտվում է, որ հայրենագիտությունը կրթության բովանդակության տիրույթ է, որն ապահովում է հայրենի պատմաաշխարհագրական միջավայրի, հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքի իմացություն, ազգային ինքնության զարգացմանը միտված էական հատկանիշների, ազգային նյութական և հոգևոր արժեքների, հայոց եկեղեցու և նրա դավանանքի ճանաչում ու արժևորում, քննադատական և ստեղծագործական մտածողության հմտությունների զարգացում[1]:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ զոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ ուսուցիչը պետք է կարողանա ընտրել այնպիսի մեթոդներ և դասավանդման մոտեցումներ, որպեսզի ստանա ցանկալի արդյունքը:

Նկատենք, որ պատմության դասերը մյուսների համեմատությամբ ավելի շատ ունեն դաստիարակչական մեծ արժեք, որոնց միջոցով հնարավոր է իրագործել գաղափարական դաստիարակչության խնդիրներ[1]՝ նպաստելով գեղագիտական և բարոյական, հայրենասիրության դաստիարակությանը, ինչպես նաև աշխարհայացքի ձևավորմանը: Պատմական անձերի գործունեության ու վարքի նկարագրության միջոցով երեխաների վրա դաստիարակչորեն ներգործումն ավելի նկատելի է: Այս պարագայում կարևորվում է պատմական, մշակութային դեմքի ուղենշային, դաստիարակչական ներգործուն ուժը:

Նշենք, որ կան հետաքրքրական մեթոդներ, որոնք ուսուցչին հնարավորություն են տալիս և՛ դասանյութը ամփոփելու, ստուգելու, և՛ դաստիարակչական աշխատանք ծավալելու: Օրինակ՝ արդյունավետ կարելի է կիրառել «Գիտելիքի դոմինո»: Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ: Քայլ 1 – Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից: Քայլ 2-Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին: Քայլ 3 – Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ ու կարդում իր քարտի հարցը: Քայլ 4- Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը: Քայլ 5- Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Քայլ 6- 2-3 աշակերտ արտահայտում են վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

Ըստ այսմ՝ բերենք դասի օրինակ:

[1] Տե՛ս Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 227:

Օրվա դասի պլան

Առարկա՝ - Հայոց պատմություն

Դասարան՝ 7-րդ

Թեմա՝ Հայկական պետականության առաջացումը Կիլիկիայում

Դասի տեսակը՝ Համակցված

Միջառարկայական, ներառարկայական կապեր՝ Հայրենագիտություն, Համաշխարհային պատմություն, Աշխարհագրություն, Հայոց եկեղեցու պատմություն:

Կիրառվող մեթոդներ, հնարներ՝ Փոխադարձ ուսուցում, զննականություն, բանավոր շարադրանք. մտագրոհ, պրիզմա, քառաբաժան:

Դասի նպատակները.

ա/ ակադեմիական

- ✓ մեկնաբանել Կիլիկիայում հայկական իշխանության ստեղծման նախադրյալները,
- ✓ ներկայացնել Կիլիկիայի աշխարհագրական դիրքի և հայերի այնտեղ տեղափոխվելու պատմական պատճառները,
- ✓ Ռուբեն իշխանի կողմից 1080թ. Հայկական իշխանության ստեղծման մասին, կկանողանան քարտեզի վրա ցույց տալ Կիլիկիայի տեղը, ներկայացնել նրա բնակլիմայական պայմանները, կարողանան բացատրել օգտագործված եզրերը և հասկացությունները,

բ/ սոցիալական

- Տալ հայեցի դաստիարակություն

Անհրաժեշտ պարագաներ Դասագիրք, տետր, քարտեզ, տեսանյութ, նկարներ

Դասի ընթացքը:

1. Կազմակերպչական պահ:

2. Տնային առաջադրանքներից ծագած հարցերի քննարկում, մեկնաբանում:

Խթանման փուլ

Աշակերտների հարցում:

4. Համապատասխան հարցադրումներով բևեռել աշակերտների ուշադրությունը ներկայացվող դասի նյութին:

5. Առաջադրանքների կատարում:

Գրատախտակին գրել «Կիլիկիա» առանցքային բառը և «Մտագրոհ» մեթոդի կամ «Պրիզմա» վարժության միջոցով փորձել վերհանել սովորողների նախնական գիտելիքները Կիլիկիայի վերաբերյալ: Ընդ որում՝ դրանք կարող են տարաբնույթ լինել՝ սկսած «Կիլիկիա» առագաստանավից մինչև «Կիլիկիա» գարեջուր: Վարժությունը կատարելուց հետո ուսուցիչը փոքրիկ տեղեկություններ է տալիս Կիլիկիայի մասին, ի մի բերում նախկինում նրանց սովորածը և քարտեզի վրա ցույց տալիս Կիլիկիայի տեղը:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը

1. Աշակերտների միջոցով նոր նյութի վերհանում և քննարկում:

2. Առաջադրանքների կատարում:

3. Առաջադրված հարցերի քննարկում:

Նախապես՝ կազմակերպչական մասի ընթացքում, դասարանը բաժանվում է 3 հոգանոց խմբերի՝ ըստ դասի ենթավերնագրերի: Համագործակցային խմբերին հանձնարարվում է կիրառել «Փոխադարձ ուսուցում» մեթոդը, սովորել և միմյան ներկայացնել դասը: Երեքից մեկը ներկայացնում է առաջին հատվածը, մյուս երկուսը, որ կարդացել էին տվյալ հատվածը, հարցեր են տալիս զեկուցողին, միասին քննարկում և աշխատանքային տետրերում դուրս գրում հատված կարևոր թվականները, անունները և իրադարձությունները: Գործընթացը կրկնվում է դասանյութի հաջորդ հատվածների համար:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը

1. Հարցերի և առաջադրանքների միջոցով նյութի ամփոփում և հիմնավորում:

   Ամբողջ դասարանով ուսուցչի ընտրությամբ սովորողները կատարում են *Կմախք* կամ *Քառաբաժան* վարժությունները:

2. Աշակերտների գնահատում:

Տնային հանձնարարություն

Սովորել «Հայկական պետականության առաջացումը Կիլիկիայում» դասը:

Նկատենք, որ յուրաքանչյուր թեմայի շուրջ կարելի է դաստիարակչական փոքրիկ զրույցներ ծավալել, օրինակ՝ խոսելով Կիլիկյան թագավորության մասին՝ կարելի է անդրադառնալ հայրենասեր իշխանների ու թագավորների արարքների քննարկմանն ու վերլուծությանը, կարելի է նույնիսկ բացասական համարվող օրինակի շուրջ ծավալվել՝ ցույց տալով, թե ոչ ճիշտ որոշումներն ինչպիսի աղետների կարող են հանգեցնել: Կարծում ենք, կարելի է նույնիսկ խոսել, օրինակ, այսօր այդքան տարածված օտարամոլության շուրջ՝ օրինակ բերելով Կիլիկիայի բնակչությանը: Այսպես, ԺԲ-ԺԳ դարերում Կիլիկյան Հայաստանում եվրոպամիտությունը ծավալվելով հասել էր բավական մեծ չափերի՝ ընդգրկելով կյանքի բոլոր ոլորտները, պահպանվել է Լամբրոնացու՝ 1195 թվականի տագնապով լեցուն նամակը՝ ուղղված Լևոն Բ-ին, որտեղ խոսվում է եվրոպամիտության ահռելի չափերի մասին և խնդրում է թագավորին, որպեսզի վերջինս միջոցներ ձեռնարկի[1]: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա օտարամոլությունը կարող է կործանարար լինել մեզ համար:

Նկատենք, որ փոքրիկ զրույցի համար կարող է նյութ ծառայել նույնիսկ թագավորի անունը, օրինակ՝ Արտաշես Բարեպաշտ թագավորի անվան *Բարեպաշտ* բաղադրիչը թույլ է տալիս եզրահանգումներ անելու այդ ժամանակաշրջանի արժեքների վերաբերյալ: Այսինքն՝ հեթանոս հայի համար պատվաբեր էր բարուն ծառայելը /պաշտել հին հայերենում նշանակում է ծառայել, մեծարել և այլն[2]/:

---

[1] Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 303:

[2] Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, էջ 1764 /Էլ. շտեմարան/:

Եզրակացություն

Կատարելով մեր ուսումնասիրությունը՝ եկանք հետևյալ եզրահանգումների.

- Դպրոցը պատասխանատու է ժամանակակից քաղաքացու արժեհամակարգի ձևավորման համար:
- Չափազանց կարևոր է, որ դասերի ընթացքում աշակերտները ոչ միայն ծանոթանան տվյալ դասանյութին, այլև ունենան իրենց կարծիքը, ապա և դիրքորոշումը վերջինիս նկատմամբ, որը և պատասխանատու է աշխարհայացքի և արժեհամակարգի ձևավորման և զարգացման համար:
- Պատմագիտական բնույթի նյութերը պարունակում են *համամարդկային մշակութային* և *հայագիտական* տեղեկություններ, որոնք կարևորվում են ինչպես ազգային դպրոցի հիմքի համար, ազգային դաստիարակության, ինքնագիտակցման և արժևորման, այնպես էլ համամարդկային արժեքների իմացության համար:
- Աշակերտները պետք է լինեն համամարդկային և ազգային արժեքների կրողը:
- Դասանյութը պետք է այնպես ներկայացվի, որ աշակերտները համակարդկային արժեհամակարգում տեսնեն ու կարևորեն ազգայինը, հասկանան և գիտակցեն, որ հայ ազգային արժեքների համակարգը համաշխարհային իրականության լավագույն դրսևորումներից է: Հայ մարդը պետք է դա հասկանա, կարևորի և հպարտանա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Ա. Սահակյան, Մանկավարժություն, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2005, 446 էջ:
2. Լալայան Կ., Պատմության դասերի պլանավորման նմուշ-օրինակներ, Երևան, 2009:
3. Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան։ Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1837 /Էլ. տարբերակ/։
4. Ղևոնդյան Հ.Հ.,Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2001:
5. Մելքոնյան Ա., Սիմոնյան Ա., Նաջարյան Ա., Մուրադյան Հ., Հայոց պատմություն 8, Երևան, «Զանգակ» հրատ., Երևան, 2013, էջեր 193:
6. Պապոյան Հ.Գ.,Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, «Տիր» հրատ. 304 էջ, 2013:
7. Սաֆրաստյան Ռ., Ղևնչյան Վ., Պետրոսյան Վ., Նազարյան Ա., Սարգսյան Ա., Համաշխարհային պատմություն, 11 դասարանի դասագիրք, ընդհանուր և բնագիտական հոսքի համար, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջեր 161:
8. Ստեփանյան Ա., Ավետիսյան Հ., Քոսյան Ա., Համաշխարհային պատմություն, Հին աշխարհ, 6 դասարանի դասագիրք, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2013, էջեր 161: